

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(ԽԵԻ) ՅՈՎ, ՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

= 3 =

ԳԱՆՁ ԽԱՉՎԵՐԱՑԻ ԵՐԿՐՈՐԴ ԱԻՈՒՐ

Ա.

Յայն եղեմական, դրախտին փափկութեան, ծառոյն գիտութեան.
տընկոյն արհնութեան, նախնոյն նորոգման, դու փայտ փըրկութեան.
եղեր զենարան, եւ մեծ ճեմարան բանին հայրական.
աղբերաց հոսման, ի կողէն արեան, որ ի բեզ հեղան.
դըժոխք պարտեցան, հիմանց բակտեցան, եւ դրախտըն բացան.
խաւարըն լուծան, լուսով հաստեցան, եւ պայծառացան.
մարդիկ զաւրացան, եւ արժանացան դրախտին փափկութեան.
երգեմք ընդ նոցայն, հոգւոց փրկութեան, նոր երգս արհնութեան:
Ընկալ զերկըրպագութիւն խաչիդ փրկական. աղաչեմք:

Բ.

Որ բարձրանալով, ի բեզ Հաւր կամով, անեղըն մարմնով.
արեալ ըսպունգով, զեղին բացախով, դառըն զըմբով.
զի բաղցր առնելով, իւր ճաշակելով, գայնմ որ խաբելով.
տիգին խոցուածով, զկողածնին թողով, գյանցանս բաւելով.
սուրբ պատուիրանով, եւ բարի գործով, զմեզ ազատելով:
Ընկալ . . . :

Գ.

Վեհին զաւազան, փայտ կենդանութեան, սուրբ խաչ զաւրութեան.
Դու ցուպ յաղթութեան, եւ նոյեան տապան, առիթ փրկութեան.

- Բնագիր Ծ, թղ. 416-7, Հմմտ. 2,
- Գանձգիրք, ձ = Ձեռ. Ս. 3. թ. 2149,
- Գանձգիրք, բուրգիր: Ծ, Գանձգիրք, էջ 707:
- Խորագիր ունի 2:
- Ա. — 4. — աղբերցըն, 2: աւեան, բըղխման, 2:
- 5. — . . . խաւարըն լուծան եւ հալածեցան, 2ձ:
- 6. — մահու գեղք բարձան, պարտաւորեցան, եւ դրախտըն բացան, 2ձ:
- 7. — . . . եւ արխացան . . . 2:
- 8. — հոգով, 2:

- 9. — փրկութեան, 2:
- Բ. — 1. — = ձ:
- 2. — = ձ: . . . , . . . , զայն որ խառնելով, 2:
- 3. — Դառնացոյց հոգով, դառըն զըմբով, զի քաղցր առնելով, 2: . . . , զայնմ որ խաբելով, դառնացոյց հոգով, ձ:
- 4. — իսկ Տէր զըթալով, քաղցրացոյց կամով, իւր ճաշակելով, 2:
- 5. — տիգին . . . ջնջելով, 2ձ:
- Գ. — 2. — Դու փայտ փըրկութեան, եւ ցուպ յաղթութեան, նըշան ամբութեան, 2: Դու փայտ գիտութեան . . . , . . . , ձ:

ով ծառ սարեկայն, խոյին կախարան, Սահակայն փոխան.
 սանդուխտ Յակոբայն, էջ հրեշտակական, ելք ազգի մարդկան,
 աղիւսանքման, ակրն պատուական, եւ զէն ամրութեան.
 որով փրկեցան, ազգն իսրայէլեան, եւ ազատեցան:

Ընկալ . . . :

Գ.

Ահարկու նըշան, դրոշմն ըզգայութեան, Մովսէսի մանկան.
 բանին պատուանդան, գառին զենարան, պարծանք պաւղոսեան.
 զարեղ պահապան, դու որդւոց մարդկան, որ ի քեզ յուսան.
 երգաւք ձայնական, ծունր աղաւթական, երկրրպագական.
 սուր անբրթական, եւ մեծ ախոյեան, անծանց պահապան.
 սուրբ հացին սեղան, որ կեանս տայ մարդկան, մեղաց քաւարան:

Ընկալ . . . :

Ս.

Նեղիւոց յարմար, վըշտաց մըխիթար, սուրբ խաչ կենարար.
 դիւաց մահարար, վանող զպատահար, եւ ուխտակատար,
 աշտանակ գաւհար, աշխարհիս խաւար, լոյս եւ լուսարար.
 սեղան սրբարար, հացին կենարար, միջնորդ հաշտարար.
 կուրաց լուսարար, կաղաց զնացարար, ախտից սրբարար.
 մեղաց քաւարար, մահու կենարար, մեզ ազատարար:

Ընկալ . . . :

Զ.

Նախ Մովսէս տեսեալ, զՏէրն ի քեզ կախեալ, եւ կեանք անուանեալ.
 զգաւազանն արկեալ, վիշապացուցեալ, զդիւթացըն կըլեալ.
 գաւազան ձրգեալ, զծովըն պատառեալ, յերկուս բաժանեալ.
 եւ ըզփայտն աւրհնեալ, ի ջուրն ընկեցեալ, եւ քաղցրացուցեալ.
 նըպատակ ցըցեալ. եւ զաւծըն կախեալ, զքեզ աւրինակեալ.
 Դաւիթ նըշանեալ, եւ լոյս անուանեալ, յաղեղանց փրկեալ.
 Սողոմոն երգեալ, փայտ կենաց կոչեալ, եւ արդարացեալ.
 Եսայի տեսեալ, աթոռ բարձրացեալ, ըզքեզ վերացեալ.
 Սուրբ խաչ դու աւրհնեալ, զովեալ ւ երանեալ, եւ փառաւորեալ:

Ընկալ . . . :

- | | |
|---|--|
| 3. — Փայտ արդարութեան, և նոյեան տապան, պատճառ փրկութեան, 2ձ: | . . . , սրբոց պահապան, ձ: |
| 5. — սանդուխտ Յակոբեան, 2: | 6. — Չուկի ձ: |
| 7. — 1. — . . . , . . . , դու սեմոց դըրան, 2: | Ե. — 4. — հացին, գառին, 2ձ: |
| 2. — Մանօր. — Շ կը սկսի այս տողի կէսէն: | 5. — ախտից, 2ձ. աղտից, Շ. ուխտից, Ծ: |
| 4. — երգոց . . . , . . . , երկըրպագութեան, 2: | 2. — 1. — կեանք, գառն, ձ: |
| 5. — սուր անբրթական, մեղաց քաւարան, սուրբ խաչ զօրութեան, 2: . . . , | 2. — զթութեացըն, Ծ: |
| | 5. — նըպատակ ցըցեալ, զքեզ աւրինակեալ, քառաթեխն նմանեալ, Ծ: |
| | 6. — փրկեալ, ապրեալ, 2ձ: |
| | 9. — Ով նշան աւրհնեալ, . . . 2ձ: |

Է.


Երեւիս նըշան, լուսով աննւման, գուշակ զալըստեան.
 լուսով ըս ցընծան, եւ ուրախանան, բոլորս եղական.
 եւ յամաւթ մընան, ազգըն հրէական, լորբ ոչ հաւատան.
 տաճիկը մըսըման, եւ որբ ուրանան, զխաչըն փրկական.
 զաւրբըն վերնական, գունդը հրաբունական, հոյլըն անմարմնական.
 զքեզ պատուեալ ցընծան, պարեալ զուարճանան, եւ ուրախանան.
 Սուրբ խաչ յաղթական, նըշան պատուական, լեր մեզ պահապան.
 արա զմեզ արժան, բոյին արհնութեան, եւ ողորմութեան:
 Յիշեա ... : Եւ եւս ... : Զանծինս ... :

Ը.

Արբուհոյ կուսին, մաւր անեղ բանին, սուրբ Աստուածածնին.
 Յովանուե մեծին, սուրբ Կարապետին, եւ Ստեփաննոսին.
 Արբոյն Գրիգորին, մեր Լուսաւորչին, ընդ Արբոյ եաչին.
 մաղթանք հիւսեացին, բեզ աղերս լիցին, ւ առ բեզ խնկեացին.
 բարեխաւս լիցին, բեզ հաճոյացին, որդիդ միածին.
 քաղցրը թըւեացին, աղաչանք սոցին, ընդ մերս հաւատին.
 բանդ եղեալ մարմին, որդի Սուրբ Կուսին, խաչեալդ ի փայտին.
 տալով մարդկային, ըզխաղաղութիւն եւ զողորմութիւն.
 սրբոյ տաճարին բում հաստատութիւն եւ անդորրութիւն.
 Սուրբ Հայրապետին եւ քաջ արքային Հայոց աւգնութիւն.
 մեր ժողովրդին, համայն հասակին, մեղաց թողութիւն.
 ծերի եւ տղայի, եւ ամենայնի, տալով սրբութիւն.
 զանծինս ասողին, Տէր Յովաննիսին, ի Թըլգուրանին.
 եւ ստացողին, Տէր Մարտիրոսին, եւ ծնաւդաց նորին.
 եւ սրբագրողին, եւ փոխարկողին, մեղաց թողութիւն:
 Ողորմեաց ... :

(16)

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ



- Է. — 4. — Զուեիւն, Զժ:
- Ը. — 2. — ..., ..., նախաօրկային, զուեիւն ... Զ:
- Ճ. — 5. — ..., ..., աղաչանք սոցին, Զ: ... , ..., քաղցր թուեացին, Ճ:
- 6. — ..., ..., ..., քրիստոնեայ ազգին, Ծ: Աղաչանք սոցին, բանդ եղեալ մարմին, որդիդ միածին. խաչեալդ ի փայտին, տալով աշխարհի ըզխաղաղութիւն եւ զողորմութիւն, Ճ: — Զուեի, Զ:
- 7. — ..., որդիդ միածին, ... Զ:
- 8. — տալով աշխարհի, մեր խաղաղութիւն ... Զ:
- 10. — ..., և քաջ արքային, և մեզ աւգնութիւն, Զժ: — Եւ մեզ, մերոյ, Ճ:
- 11. — Համայն հասակին, և աստիճանին ..., Զ:
- 12-15. — Զուեիւն, Զժ:
- 14. — Եւ ստացողին, այս Գանձարանին, Մալազ արեղին, Ծ:
- 15. — քաւութիւն, Ծ: